

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Սովորական թիվը բաց է առաւօտեան 10—5 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻՎԱՅ 1905 ԹԻՖԼԻՍԻՆ (33-ՐԴ ՏԱՐԻ)

«ՄՇԱԿ»-ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅԻՒՆ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԴՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօն և խոսքի օրերէն:

ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսականը նոյնպէս 10 ռ., տասն ամսականը՝ 9 ռ., ինն ամսականը՝ 8 ռ., 8 ամսականը՝ 7 ռուբլի, եթէ և մեկ ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՆԱՀԱՄԱՆԱՆ ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

Մշակ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱՅԻՆ. (Բաղարայան և Բաբոնյան փողոցներէ անկիւն): Ստորագրել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէ «Մշակ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal «MSCHAK»:

Ցայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիզուներով:

Ա. Պ. Ա. Բ. Կ. ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 2 Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գեներալ Յարութիւն Ուղարկեալ. Թատրոն և երաժշտութիւն. Զինուորի թուղթի տպագրութիւններ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՆԱՀԱՄԱՆ. Պարս. Արտուրի անկումը. Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՄԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պատկերով Միսոգի նշանակած քննութիւնների մասին, և սկզբունքի տեսակետով համակրութիւն յայտնելով այդ կարգադրութեան վերաբերութեամբ, մենք ասացինք, որ երբ մի հիմնարկութիւն մտնում է իր գործունէութեան մէջ քննադատական տարր, նա զբաղում հաստատում է հասարակութեան մէջ վստահութեան զգացմունք դէպի ինքը:

Բայց այստեղ առաջ է գալիս մի կարևոր կէտ, որի վրա այսօր կը ծանրանանք փոքր ինչ աւելի մեծ չափով: Ահա այդ կէտը:

Եթէ քննութիւններ կատարելը, եթէ գործերին վերահսուել լինելը, եթէ հաշիւներ պահանջելը այդքան էական նշանակութիւն ունեն հասարակական հիմնարկութեան վարկի համար, անկասկած շատ կարևոր է, որ այդ քննութիւնները, վերահսուելիւնը և հաշիւ պահանջելը կազմակերպված լինեն կանոնաւոր և լիակատար կերպով: Մենք լաւ գիտենք, որ քննութիւնները յաճախ առանց գոյների չեն անցնում: Մի տեղ պարտօնները զրկվում են իրանց արդուաւոր միջոցից, միւս տեղ նրանք ենթարկվում են տուգանքների և ուրիշ գրկանքների: Տուած պատիժը կարող է մի դէպքում լինել չափազանց ծանր, իսկ մի ուրիշ նոյնանման դէպքում չափազանց մեղմ. վերջապէս կարող են տեղի ունենալ թիրիմաքութիւններ: Մենք այլ ևս չենք խօսում, որ կարող են լինել բանասիրութիւններ և ինտելիգենցի, որոնք մտլորութեան մէջ կարող են զգնել քննիչներին և սխալ որոշումներ ձեռնարկել:

Այդ պատճառով անհրաժեշտ է, որ քննութիւնները կատարվեն որոշ հրահանգներով և կարողութիւն ու միջոցներ տրված լինեն մարզկանց հերքելու նրանց վրա դրած մեղադրանքները, եթէ վերջիններս արդարեւ թիրիմաքութեան և զերպարտութեան արդիւնք են:

Մենք այլ ևս չենք խօսում այն տխուր

երկույթի մասին, որ անցեալում տեղի է ունեցել, երբ այնպիսի կողմնապահ և վայրկիքով քննութիւններ են կատարվել, որոնք ոչ միայն չեն նպաստել արդարութեան վերականգնմանը, այլ և բոլորովին հակառակ հետևանքներ են տուել: Մենք օրինակներ չենք բերում, չը ցանկանալով կենտրոնանալ մասնաւոր դէպքերի վրա:

Մենք համակրում ենք քննութիւններին, մենք կը ցանկանայինք, որ հաշիւ պահանջելը և վերահսուելիւնը դառնան սկզբունքներ մեր հիմնարկութիւնների մէջ: Բայց մի և նոյն ժամանակ կարևոր ենք համարում շեշտել, որ նկատելով քննութիւններ կատարելը, իբրև շատ էական և հիմնական մի գործողութիւն, պէտք է ամեն ջանք գործ դնել, որ այդ քննութիւնները իրանք կազմակերպված լինեն ամեն լրջութեամբ և չը կորցնեն իրանց վարկը հասարակութեան առաջ:

Եթէ դա կարևոր գործ է, պէտք է, որ նա զբաղվի ինչ ամուր հիմքերի վրա, որպէս զի կարողանայ կատարել կենսի մէջ իրան վերադասած օգտաւէտ գերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Ա. ՈՒՆԻ

Պարս. Արտուրի անկումը օրվայ այն խոշոր փաստ է, որ ամբողջ աշխարհի խօսակցութեան առարկան է դարձել, բայց ամենից շատ, ի հարկէ, Ռուսաստանում: Ռուսաց բոլոր լրագրիչները յօդուածներ նուիրեցին օրվայ տխուր եղելութեան: Առ այժմ մենք կը բերենք մի բանի լրագրիչների կարծիքները:

«Рубе» լրագիրը գրում է.

Սուգ հագնենք, հոգեհանգիստ կատարեցէք... Ստորագրված է անձնատրութիւնը: Ժողովրդական հպարտութիւնը խոցված է մինչև արտի խորքը: Անողորմ ճակատագիրը չը տեսնված փրճանքներից մէկն էլ մատուցեց մեզ: Բայց այս անհղ ժամին մենք մի մեծ ժողովուրդ չէինք լինի, եթէ դէթ մի քանի անձնատրութիւնը դառնայինք փոքրիկ վնասութեան: Մի բան է այժմ մեզ հարկաւոր—մտքի և գործի միութիւն: Առանց ժողովրդի կառավարութիւնը մենակ, ինչպէս և 12 թագաւոր դաժան ձեռնով մէջ չէ կարող յաղթանակել ռուսական մեծ վերջ: Ժողովրդի հետ մենք յաղթել ենք և տաններկա աղբի: Մեր առջև այնպիսի ոյժեր չեն, որոնց հետ մենք կարող ենք հաշիւ տեսնել, ինչ գնով էլ դա լինի, եթէ ուժեղ լինի կառավարիչների միութիւնը այն շրջանի հետ, որին պատկանում է միւս ամբողջ Ռուսաստանը: Առանց այս միութեան՝ ուսու ժողովրդի 1/10 մասը մեռած է:

մեռած և փառ է անպատու և անփառունակ: Առանց այդ միութեան էր, որ մենք հասանք ներկայ պարտութեան: Երկրորդ կարողութիւն պիտի ունենայ քննիչը իր գրութիւնը և նորից գտնելու հաւատը դէպի ինքն իրան և իր ապագան:

«Наша Дня» լրագիրը գրում է.

Միտնում ենք փշրված, չարդարացած յոյները, ցաւում ենք պաշտպանելի համար, այն անազին գոյնի համար, որ տըւինք մենք և եսպէսացիները հողի այդ քաղաքաւոր փրճիկ անկիւնի համար, բայց մի և նոյն ժամանակ մի ինչ որ բան ստում է մեզ, որ չի կրչի մեր առաւոր գոհարէրութիւնը, որ դա փրկանքի մի ծանր, բայց գոյց անհրաժեշտ գործողութիւն էր: Պարս. Արտուրը ընկաւ: Պատճառ է արդեւ մեզանում ստեղծութեան զգացմունքը դէպի ինքնամի, յուզում է մեզ արդեւ միջոցի և հատուցման անկուշտ ծարաւը: Ոչ, Պարս. Արտուրը բոլորովին այն չէ, ինչ էր Սեւիստաօօլը: Սեւիստաօօլը մեր կենսական ներքին է, Պարս. Արտուրը միայն մի թանգազին մատանի մեր ճկողիքի վրա: Ժողովուրդը գտնում է իր բերած և բերելը զոհերը, բայց նա չի զգայ Պարս. Արտուրը: Նա չի զգայ նրան, նրա իսկ և ինքնապէս, ուստի մեր մէջ չէ կարող լինել ոչ անկուշտ, ոչ վրէժի ծարաւ, բայց դա փոխարէն մենք ունենք նախանձ և մրցակցութեան զգացմունք: Մի պիտութիւն, մերից երեք անգամ պակաս ազգաբնակչութիւն և մերից 50 անգամ պակաս հող ունեցող, զինված ազատութեամբ, գիտակցական վերաբերմունքով դէպի իր պահանջներն ու կոչումը, մի այդքան կարճ միջոցում յաղթութիւնների այդքան ապշեցուցիչ մի շարք: Եսպէս իսկ մեզ վրա, մեր հայրենիքի վրա և նոյն իսկ մեր բանակի վրա չը տարււ իր յաղթութիւնը, այլ մեր պատմական պակասութիւնների վրա:

«Руб. Вѣд.» լրագիր կարծիքը.

Հարկաւոր միջոցներն ոչնչացրված են գուր, առանց օգտի՝ ժողովուրդների, քաղաքակրթութեան, մարդկութեան համար: Այդ միջոցներով որքան օգտակար և անհրաժեշտ բաներ կարելի էր անել, որքան արդիւնաւոր աշխատանքներ կարելի էր կատարել այդ ոչնչացրած մասնանքի ոյժերով: Հարկաւոր միջոց մարդկանց աշխատանքի խնայված այն տողերով, որոնք վատնված են միայն նրանց բազմաթիւ եղբայրակիցների անժամանակ և աննպատակ կոտորածի համար: Պարս. Արտուրը—մի մեծ սարսափ է մարդկութեան համար...

ԳԵՆԵՐԱԼ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՋԱԿԱՆ

Դեկտեմբերի 27-ին, կարճատե հիւանդութիւնից յետոյ՝ հայ գեներալներից մէկը—Յարութիւն Ուղարկեալի մարմինը էլ հողին յանձնվեց զինուորական մեծ պատուով Պօլիվանքի եկեղեցու մօտ, իշխան Բէհրուդեանի ներքին տոհմական դամբարանների շարքում, 77 տարեկան հասակում:

Հանգուցեալը ընկել թիֆլիսի էր: Նա իր սկզբնական ուսումը ստացել էր Գ. Պատրիսեանի, Մ. Ռոտինեանցի, Գ. Աքիմեանի, Դաւիթեանի և ուրիշների հետ Պաշ. Արտվեանից: Ապա մտնելով Լազարեան ճեմարան և Մօսկվայի համալսարան՝ աւարտել է իր ուսումը փայլուն կերպով կանգիւղատի կոչումով: Դեռ ուսանող ժամանակ ամուսնացել է հայ գեներալ Երեմիա Արծրունու դստեր հետ Մօսկվայում: Մահաւն շուտով զրկվելով կնոջից՝ մտաւ զինուորական ծառայութիւն և իր հաւատարմի ու արիւնքի մատակցութեան հասաւ գեներալ լէյտենանտի աստիճանին:

Թեւ ի մի առ մի նրա կատարած ծառայութիւնները և արած քաջութիւնները՝ աւելորդ է, բաւական է միայն յիշել, որ նա եղել է Լազարեան քաջ գեներալի ձեռքի տակ, ծառայել է Դաղստանի և վերջին ուսու թիւրքական պատերազմներում և քաջութեան համար ստացել է ոսկէ սուր: Վերջին տարիներում նա եղել է Ջաբաթալի շրջանի կառավարիչ և ապա Դաղստանի զինուորական նահանգապետի աւագ օգնական: Երկու տարի է, որ նա թուղի էր իր ծառայութիւնը:

Հանգուցեալը իր քաղցր բնավորութեամբ, սարակութեամբ զինուորական ցրտի և թատարակութեամբ վարմունքով և տեղական սովորութիւնների—աղաթների շերտ համակրութեան ներկայ գտնվել ժողովրդական ներկայացուցիչ

համար՝ գրաւել էր առանձնապէս ամենի սէրն ու յարգանքը: Ջաբաթալի շրջանի և Դաղստանի ամբողջ ազգաբնակչութիւնը շատ պիտի տխրէ նրա մահուան լուրը լսելով: Բայց ժողովրդի նրա օգտին կատարած գործերը շատ ժամանակ պիտի խօսեն նրա մասին և պահպանեն նրա բարի անունն ու յիշատակը: Տ. Եղնիկ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան հանդէսը.—Ներկայացում Մուրաշկոյի թատրոնում.—Համերգներ Բուխարայում:

Դեկտեմբերի 28-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում կայացաւ «Մանկական մեծ հանդէս տօնածառով» յօդուած Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան «Երեւթաների ձրի և էթանգին ճաշարանի»: Հանդէսի ծրագիրը շատ հետաքրքիր էր և բազմազան. այստեղ կար դիւորատոր Նովակի դերած մեծ դիւորաման «Մոնդեան գիշերը առաջնապահութեամբ», բոլորովին տեսանելի տեղում աչքի էր ընկնում «Հակայ ըրեւսը», որի լուծման համար նշանակված էր ոսկէ և արծաթէ ժէտոններ հայոց Բարեգործական ընկերութեան մակագրութիւնով: Դահլիճի անկիւններում զետեղված քիսկներում ծախվում էին մատչելի գներով մանկական խաղալիքներ, բոնֆէտներ և քաղցրեղէններ. իսկ դահլիճի մէջ տեղը բարձր պատուականի վրա կանգնած էր պսակի համար պէճված նորահարսի պէս հակայ տօնածառը էլէքտրական զոյնգոյն ճրագներով լուսավառված և այդ բոլորի հետ միասին մտնող դահլիճը իր պայծառ էլէքտրական լուսավորութեամբ հրաշալի տեսարան էր ներկայացնում:

Մանկական հանդէսին ներկայ էին Զիգրաշէնի, կանանց հայոց Բարեգործական ընկերութեան ուսումնաբանների և որբանոցի աշակերտները իրանց վարժուհիներով, որոնք մեծ աշխատանքով և պատրաստակարանութեամբ զեկավարեցին մանկական խաղերը. պէտք էր տեսնել այդ երջանիկ մանկական աշխարհի ներկայացուցիչների ուրախ, գուարթուն և բոցավառ դէմքերը մոռանալու համար գոնէ քաղապէս կենսելի առօրեայ թշուառութիւնները. առանձին կենդանութիւն տուին հանդէսին երեխաների պարերը, հանդիսաւոր գիացքը դրօշակներով և խմբային երգեցողութիւնը:

Բացի վերոյիշեալ ուսումնաբանների աշակերտներից հանդէսին ներկայ էին և մասնաւոր ընտանիքներ իրանց երեխաներով, բայց նրանց թիւը զարմանալու չափ սակաւ էր. հեր էին մեր հայկական օջախի անդամները. ահա այն «Երեւսը» որի լուծման համար այդ օրը պէտք էր մի այլ մրցանակ նշանակել...

Շնորհակալութեան և յարգանքի արժանի են հանդէսին մասնակցող վարժուհիները և այն յարգելի տիկիները և օրիորդները, որոնք իրանց անձնական աշակցութեամբ նպաստեցին հանդէսի անողութեան: Բարեգործական ընկերութեան «Ձրի և էթանգին ճաշարան» այդ հանդէսից դուրս արդիւնք կունենայ ոչ աւել քան 100 ռուբլի. ընկերութիւնը կարող է մըլիթարվել եթէ ոչ այդ ողորմելի արդիւնքով, որ ինքնաճանաչ հասարակութեան համար նախադրեալ է, գէթ երեխաներին տուած անթիւ զուարճութիւններով:

II

Երկուշաբթի, դեկտեմբերի 27-ին, Մուրաշկոյի թատրոնում ներկայացվեց Մ. Պաշկեպեանի «Արշալու» դրաման և «Պատանհալութեան խրատ» վոդևիլը: Վերոյիշեալ թատրոնի հայ թատերասէրները ծրագրած ունեն խաղալու այն թատրոնում մի շարք պիէսներ, սակայն փորձը ցոյց է տալիս, որ յաճախող հասարակութիւնը զինուորական ցրտի և թատարակութեամբ վարմունքով և տեղական սովորութիւնների—աղաթների շերտ համակրութեան ներկայ գտնվել ժողովրդական ներկայացուցիչ

ներին: «Արշակ ք»-ի մէջ բաւական աջող են, աւելի անկուշտ: Իսկ փորձները, փորձնե-տարան իրանց դերերը՝ պ. Սողոմոնեան (Ար-շակ) և Մ. Տէր-Առաքելեանը (Սիսակ): Մնա-ցածներն իսկ, որպէս սիրողներ ըստարար էր: Վերջինը մեծ պատճառներն պատճառեց որ իսկական չինացին այնտեղ, իր հայրենի-ժողովրդին՝ շնորհիւ պ. պ. Ղազարեանի և Միքայիլեանի: Պէտք է խոստովանել, որ վերո-յիշեալ պարոնները կօմիքական դերերում յա-ճախ աչքի են ընկնում և նպաստում ներկա-յացմանը: Թէպէտև պ. Մուրադեան արդէն մօտ ժամանակներում շինել է տունը թատրոնի ետևի մասում պատշաճ, թատրոնի փորձու-թեան պատճառով, սակայն դժբաղդաբար այդ երկույն թատրոնը կիսով չափ դատարկ էր: Դեֆիցիտ եղաւ մօտաւորապէս 30 բոլորի: Ս. Պ.

III

Բուժային մեզ գրում են հետեւեալը. «Մի շարքից յետոյ, յունվարի 5-ին, թաթախ-ման երկուցիսն պատարարին առաջին ան-գամ Բուժայինում կերպէ տեղական հայոց եկեղեցում երկու սեռից բաղկացած քառասուն խումբը պ. Ա. Մամաշեանի ղեկավարու-թեամբ: Մամաշեանը մօտ 20 օր է այստեղ է և պատրաստում է խումբը երգելու Մ. Եկ-մարեանի ներդաշնակած եղանակով:

Նոյն եկեղեցական երկսեռ երգեցիկ խումբը 40 հոգոց բաղկացած, յունվարի 8-ին, շարք երկուցիսն տալու է համերգ տեղական քաղա-քային թատրոնում: Բացի երգերից կը լինեն նաև հայկական ժողովրդական պարեր ազգա-յին շրթերով: Ինքը Մամաշեան կերպէ սօր-հայկական և օտար երգեր: Գործի նախա-ձեռնողները մտադիր են այսպիսով դրաւել ժողովուրդը դէպի ժողովրդական երաժշտու-թիւնը: Գ. Սարուսեան

ԶԻՆԻՈՐԻ ԹՈՒՈՅԻՎ ՏՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ (Նամակ Սարգիսի ղեկավարելու 2-ից)

II

Գալով Սարգիս քաղաքի ազգաբնակչեան, մենք պիտի ասենք, որ բացի չինացիներից և առանձիններից, որոնք կազմում են ազգաբնակչու-թեան գլխաւոր մասը, այստեղ ապրում են բա-ւականաչափ եւրօպացիներ, ինչպէս՝ գերմանա-ցիներ, ֆրանսիացիներ, անգլիացիներ և այլն, որոնք զբաղվում են զանազան առևտրական ափսոսանքներով: Առևտրի ասպարէ-զում, ինչպէս և ամեն տեղ, առաջին տեղը բռնում են հրէաները: Գաղաթիւ համարեալ բոլոր անշխատագր հիւրանիւները, ճաշարան-ները և ուրիշ սոցիալական գործարանները նը-րանց ձեռքում են: Կան վրացիներ, հայեր և մասամբ թուրքեր, որոնք ընդհանրապէս քա-ղաքի կեանքի մէջ մի առանձին դեր չեն խա-ղում: Սրանք մանր մունր վաճառականներ կամ կապալառուներ են, բոլորն էլ գրեթէ արքայապետներ:

Թէ ճանապարհում, Սարգիս մեկնելիս, թէ այստեղ, քաղաքում, մեր առանձին ուշադրու-թեան առարկան միշտ եղել են ըստ չինացի-թիւնը, ինչպէս մի նոր, մեզ հետաքրքրող ան-ձանթ տարր: Սոցիալական մեծ են, չինացիին այստեղ, Մանջուրիայում, վատ է ծանր տը-պաւորութիւն է թողնում նորեկներին վրա, ինչպէս իր տարօրինակ արտաքինով, նոյն-պէս և գլուխի ստրկական հակումներով: Ման-ջուրիայ կայարանից չինացիները դարմանալի անհրեալութեամբ արդէն կատարում են իրանց քաղաքացիութեանը: Մարդ ապրում է, տես-նելով, թէ ինչպէս նրանք, ստորաշաղկով և միանգամայն մոռանալով իրանց մարդ լինելը, դիմում են այս կամ այն նորեկին, խնդրելով մի որ և է ուսուցիչէն կամ փող: Այդ անսովոր դերը, պիտաբանելին դա է, կատարում են նրանք, որոնք ուրիշի օգնութեան բնաւ կա-րոտութիւն չունեն: Իրանց ապուշ ձևացնե-լով, զարմանալի հմուտութեամբ նրանք փող են կորցում մինչև անգամ հասարակ զինւորնե-րից: Բոլորն էլ գլուխն առնելէն խօսել: Որ-տեղ կանգնում է երկաթուղիական գնացքը, այնտեղ չինացի հասակաւորներից և փոքրա-ւորներից ամբողջ լեզուներ են թափում գնացքի շուրջը փող ժողովելու նպատակով: Որքան աշխատում են ազդել նրանց վրա քո-կատարակ արժանաւորներով դէպի նրանց սխալագործութիւնները, այժման նրանք զը-գուցնում են իրանց անվիր ղեկավարով մինչև որ չը հասնեն իրանց գարշիկի նպատա-կին, մինչև որ չը ստանան ձեռնարկ կօ-պէլի եր:

Ձիւնացու նիստ ու կացը դիւղում և քաղա-քում զրուելի է, իսկ սխտորի գաղափարու-թիւնը սխալագամայն անտանելի: Կայարաննե-րում բեռնակիր չինացիները աւելի անհրա-ն

ինչ կարծում է Արսէն վարդապետը, այն ժա-մանակ ինչ իրաւունքով բռնում է զին-ւորացուին և ազատ յայտնում է, թէ նա հի-ւանդ է կամ առողջ: Մի այլ օրինակ: Կեանքի ապահովագրութիւնը տարածվում է շատ մեծ չափերով. և սակայն այդ ապահովագրութիւնը առանց բժշկի ընտելութեան չէ կատարվում: Եւ շատ յաճախ ապահով գրվել ցանկացողը մե-րժում է ստանում ընկերութիւնից՝ բժշկի ան-նպատակ վկայութեան պատճառով: Կան յայտնի ազատ պրօֆեսիոններ, որոնք կապված են բը-ժշկական քննութեան հետ: Ինչպէս է որ հի-մաւարանական երդումը այս բոլոր դէպքե-րում արգելք չի դառնայ միայն առողջ ամուս-նութիւնների կազմելու մէջ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 29-ին «Մշակ» այսօրվայ համարում տպված է Արսէն վարդապետի նամակը, որի մէջ բերված են մի քանի առարկութիւններ Սինօզի այն կարգադրութեան դէմ, որ սահմանել է ամուս-նացողներից բժշկական վկայական պահանջնե-լու կարգը: Եւ էլ խօսել են այդ կարգադրու-թեան մասին, խօսել են համակրութեամբ. ուստի խնդրում են թիւյ տալ մի քանի խօսք անելու Արսէն վարդապետի առարկութիւնների առիթով:

Սինօզի կարգադրութիւնը չէ լուծում և չէ կարող լուծել սօցիալական այն ահալելի չա-րիքը, որի անունն է սիֆիլիս: Այդ չարիքը բազմաթիւ պայմաններ ու պատճառներ ունի, որոնց դէմ կուելու համար պետական հասա-րակական միջոցներ են հարկաւոր, կեանքի մի ամբողջ վերակազմում: Բայց այդ չէ նշա-նակում թէ ինքն իրան փոքր ի շատէ ճանա-չող հասարակութիւնը պիտի ձեռքբեր ծալած նստէ ու սպասէ: Գիտութիւնն էլ անգործ չէ նստում: Նրան շատ լաւ յայտնի է, թէ ինչ ա-հագին չափերով կուել պիտի մղվի ահալել չարիքի դէմ, բայց և այդպէս չէ արհամար-հում և մասնակի փորձերը, բաց է անում հի-ւանդանոցներ, տարածում է ժողովրդական գրուածքներ և այլն:

Դա մեծ հարցի արմատական լուծումը չէ, բայց ինչ արած: Գործել պէտք է եթէ ոչ չա-րիքը վերացնելու, գոնէ նրա պատճառ ա-ղէտները հնար եղածին չափ սահմանափակե-լու, թեթեւացնելու համար: Սօցիալական յայ-տնի պայմաններն մէջ թէ գիտութեան և թէ հասարակութեան միտում է գործել յարմարվե-լով այդ պայմաններին, մի և նոյն ժամանակ ամեն ջանք գործ դնել, որ կեանքի վերակազ-մումը իրականանայ որքան կարելի է շուտ:

Անա այս տեսակէտից բոլորովին աւելորդ չէր Սինօզի կարգադրութիւնը: Բայց Արսէն վարդապետը կէմ է նրան երեք պատճառով: Առաջինն այն է, որ դրանով բռնութիւն է գործ դրվում ազատ քաղաքացի կամբ վրա: Շատ գարնանային է մայրիսի մի առարկու-թիւն լսել մի հոգեւորականից, այն դասակար-գից, որ դարբերից մի վեր իր համար սրբազան իրաւունք է գործնել ամուսնացողներին և ա-մուսնացածներին ազատ կամքի վրա բռնաւար: Մէկը իր ազատ կամքով ուղղում է ամուսնա-նալ իր ազգականին հետ: Սակայն ուղղում է բա-ժանվել իր ամուսնուց պարզապէս այն պատ-ճառով, որ չէ սիրում: Այդտեղ ազատ կամք հարցնող չէ կայ, այդտեղ հարկադրում են նա-թարիկի իրանց ինչ կանօններին, տանիքի, չարչարվել, իսկ երբ պէտք է միջոցներ ձեռք առնել որ մէկը իր ազատութեամբ չը դժբախ-տացնէ միւրեւ, անմեղին, այդտեղ առաջ է քաշվում ազատութեան հարցը:

Ոչ ազատութիւնը այդ չէ: Ազատութիւնը այն կը լինի, հրը ամուսնութիւնը կը դրվի բնական պայմանների մէջ: Այս ժամանակ հասարակութիւնը ինքը կը սահմանէ նրա հա-մար կանօններ ու պարտաւորութիւններ, ո-րոնք համապատասխանում են մարդկային կոյժան և ոչ թէ վարդապետների հնադարեան հասկացողութիւններին: Հէնց այն մեխանիզ-մը, որ ունի հոգեւորականութիւնը ամուսնու-թեան գործերում, բարոյական պարտաւորու-թիւն է դնում նրա վրա, որ այդ միայնաորդը գործադրելիս նկատի առնվի և ամուսնացող-ների առողջութիւնը:

Ազատութիւնը հրաշալի բան է, երբ չէ դժբաղդանքում ուրիշին: Գիտելը ազատ մարդ է, բայց մի համար կարող է իրէսլ դառնալ նրա ազատութիւնը: Մեր դարը ազատութիւն պահանջում է, բայց պահանջում է և այն, որ իրաւապէս անհատ իրաւունք ունենայ եր-ջանիկ, առողջ ու կուշտ լինել:

Երկրորդ առարկութիւնը, որ անում է Ար-սէն վարդապետը, այն է թէ բժշկի իրա-ւունքը չունի վկայական տալու, քանի որ նա համալսարանական երդում է տուել գաղտնիք պահել, ճշտելու ուրիշին որ և է գաղտնիք ի-րանց դիմող հիւանդների մասին: Ասենք նախ և առաջ այն, որ ճիշտ չէ թէ բժշկը ուրիշին ոչինչ տեղեկութիւն չէ տալիս հի-ւանդի մասին: Ամեն քայլում պատահում է, որ բժշկը, ընկնելով հիւանդին, յայտարարում է նրա ազգականներին կամ մօտիկ ծանօթնե-լին թէ ինքը այս ինչ հիւանդութիւնն է գը-տել: Եւ թէ բացառութիւն անվում է գաղտ-նի, սեռական հիւանդութիւնների մասին, դա, հաւատաքան է, մի նախապաշարմունք է, որ կը վերանայ մի ժամանակ: Երկրորդ մի-թէ բժշկը հիւանդուտ ամուսնացողին պիտի վկայական տալ, թէ նա այս ինչ հիւանդու-թիւնն ունի: Ոչ, այդպէս չէ լինում: Բժշկը միայն վկայական տալիս է թէ այս ինչ մար-դու ամուսնութեան դէմ արգելք չը կայ: Իսկ վկայական չը տալ արգէն ապացոյց է, որ ամուսնանալու իրաւունք չունի նա: Եթէ համալսարանական երդումը այն լինի,

ինչ կարծում է Արսէն վարդապետը, այն ժա-մանակ ինչ իրաւունքով բռնում է զին-ւորացուին և ազատ յայտնում է, թէ նա հի-ւանդ է կամ առողջ: Մի այլ օրինակ: Կեանքի ապահովագրութիւնը տարածվում է շատ մեծ չափերով. և սակայն այդ ապահովագրութիւնը առանց բժշկի ընտելութեան չէ կատարվում: Եւ շատ յաճախ ապահով գրվել ցանկացողը մե-րժում է ստանում ընկերութիւնից՝ բժշկի ան-նպատակ վկայութեան պատճառով: Կան յայտնի ազատ պրօֆեսիոններ, որոնք կապված են բը-ժշկական քննութեան հետ: Ինչպէս է որ հի-մաւարանական երդումը այս բոլոր դէպքե-րում արգելք չի դառնայ միայն առողջ ամուս-նութիւնների կազմելու մէջ:

Այստեղ էլ, ի հարկէ, նոյն նախապաշարմունքն է գործում, նոյն գաղափարապահութիւնը, որի պատճառով սիֆիլիսը և ուրիշ վնասեղան արտերը ազգեր կործանելու ոյժին են հասել: Եւ զարմանալի չէ: Մինչդեռ մենք այդ ոյժը պահպանել ենք ուղղում ազատութեան անու-նով, հասարակութեան մէջ հետզհետէ զարգե-նում է այն գիտակցութիւնը, որ ոչ ոք իրա-ւունք չունի վարակել, դժբախտացնել իր նը-մանին: «Առողջապահիկ թիւթթ» համակրու-թեամբ խօսելով Սինօզի կարգադրութեան մա-սին, ասում է, որ մինչև այդ կարգադրութիւ-նը էլ շատ երիտասարդներ դիմում էին բը-ժիշկներին իմանալու թէ կարճ են ամուս-նանալ: Եւ կը բերեմ և մի ուրիշ փաստ: Մի քանի ամիս առաջ իմ բարեկամ բժիշկներից մէկը աստիկ ոգևորված էր մի երևոյթով: Բալախանից մի քանի հասարակ թուրքեր էին եկել նրա մօտ, յայտնել էին թէ ունեցել են վնասեղան հիւանդութիւն և խնդրել էին ասել՝ կարճ են ամուսնանալ: Ոգևորել էին բժիշկին մասնաւոր թուրքերի այն խօս երբ թէ «Մենք խղճում ենք մեր ամենի աղիւնիս-րին, որը նոյնպէս մարդ են և վնասեղան ենք թէ կը վարակենք նրանց»: Եւ այս երևոյթը ճիշտը: Նոյն իսկ մասնագիտական ամբիոնի մէջ, որի վարարբմունքը դէպի կիսը յայտնի է ամենքին...

Անա այդ գիտակցութիւնը պէտք է զար-գացնել, բացառելով Սինօզի կարգադը-րութեան բուն նշանակութիւնը և ոչ թէ վարակելու և սեռուղանք այլապէս լու-ազատութիւն պահանջել: Արսէն վարդա-պետն ասում է թէ վարակը ոչնչացնելու համար պէտք է կուել անառակութեան, պոռն-կանցների դէմ: Այդ շատ հեշտ է: Բայց նը-րազ դէպքում եկեղեցին է կարգադրողը, մի մոռանալ այդ: Իսկ եկեղեցին միայն այն կա-րող է անել, ինչ իր իրաւունքն է: Նրա արա-ծը մի փոքրիկ մասնիկ է այն անգիտե-կուել մէջ, որ պէտք է մղվի կարիքի դէմ: Երբ ապտուր մեծ է, երբ նա սպառնում է մի ժողովրդի գոյութեան, չէ կարելի արհամար-հել ամեն մի միջոց, որ այսպէս թէ այնպէս այդ կուել է նպատակում:

Երրորդ առարկութեան մասին ես աւելորդ եմ համարում խօսել: Անբարեխղճութիւն, զի-ժում, խաբէրայութիւն ամեն դէպքում կարող է լինել, բայց դա չէ նշանակում թէ օրէնք է չը պիտի լինի:

L.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին օրերս Պետերբուրգում կայացել է մինիստրների կօմիտէի անգամներից մի քանիսի մասնաւոր խորհրդակցութիւն: Այդ նիստում քննվել է օտարազաւանների և օտա-րացեղների հարցը: Պետական ամենախոշոր գործիչներից մէկն այն ոգով կարծիք յայտնեց, որ օտարազաւանների և օտարացեղների վիճա-կի մասնակի բարելաւումը նպատակաւորմար չէ, որովհետեւ դրանով գոյութիւն կը պաշտ-պանէ դեռ այն սկզբունքը, թէ հպատակներից մի քանիսի վերաբերութեամբ կան առանձին իրաւունքներ, իսկ հպատակների մէջ բնակա-նաբար առաջացնում է «առարկութեան» զը-գացումը դէպի օրէնքը, որովհետեւ օրէնքը հաւասար չափով չէ գործադրում ամենքի վերաբերութեամբ: Հաստատացած կարիքներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ է արժանաւորական վերաբնութիւն օտարազա-ւանների և օտարացեղների վիճակի և անհրա-ժեշտ է նոյնպէս արդարութեան և երկրի շա-հերի պահանջի համեմատ բեֆօրմիսեր մտցնել այդ ասպարէզում:

Բարձրագոյն հրամանով, խօլերայի դէմ կուելու համար Կովկաս ուղարկված գնեւոր-մայօր կուտ Պ. Շուվալովը Բագուից անցեալ օրը հասաւ Թիֆլիս: Անցեալ երկուշաբթի կուտի նախազանութեամբ ժողով կար, ուր նա ծա-նօթացաւ խօլերայի դէմ կուելու համար ձեռ-նարկված միջոցների հետ գաւառական և նա-հանգական ս. նիտարական յանձնաժողովների կողմից: Յետոյ արդէն սկսվեց խորհրդակցու-թիւն, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առն-վին առաջիկայ դարձնել բացվելուն պէս:

«Кавказ» պաշտօնական լրագիրը հաղոր-դում է. «Դեկտեմբերի 23-ին, երբ Սև և Սպի-

տակ քաղաքներում աշխատանքներն արդէն վերսկսված էին, Բալախանիում, կէսօրից յե-տոյ ժամը 3-ին կազմակերի պահակը օրդա-պսկեց մի մեծ խումբ բանաւորներով, որոնք սկսեցին նեղել կազակներին, բարեր նետել նրանց վրա և նոյն իսկ կրակ անել: Պահակին ազատելու հասաւ կէս հարիւրեակ կազակ, որը մի քանի անգամ նախազգուշացումից յետոյ, ստիպված եղաւ կրակ բաց անել. ապստամբ-ներեց սպանվեցին 3 հոգի և վերաւորվեցին 5 հոգի: Կազակներից 4 հոգի թեթեւ վէրքեր ստացան, բայց մնացին շարքերում: Մի և նոյն օրը Բիբի-Հէյրատում անկարգութիւններ տե-ղի ունեցան. բանաւորների ամբոյժը յարձակ-վեց ոստիկանական պահապա-նի վրա. բան-ւորներին խաղաղացնելու գործում մի հոգի սպանվեց և վերաւորվեցին մի քանի հոգի: Բալախանիում և Բիբի-Հէյրատում անգամներ վերաւորված են 20 հոգի: Դեկտեմբերի 24-ին Բալախանիում այրվեցին 22 վիշկաներ, իսկ դեկտեմբերի 26-ին՝ նորից 20 վիշկա: Դեկ-տեմբերի 23-ին նաւթահորերի և քաղաքի միջև վերսկսված հեռախօսային յարաբերու-թիւնը դեկտեմբերի 24-ին նորից դադարեց:

Լրագիրները հաղորդում են, որ Կովկասի Կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնա-կատարը, աչքի առաջ ունենալով օգոստոսի 11-ի Բարձրագոյն Մանիֆեստը, հնարաւոր հա-մարեց ոչնչացնել Նոր-Բայազետի բնակիչ Մատ-թէոս Աֆրիկեանի դէմ եղած վարչական պա-տիժը՝ այսինքն Կովկասում ազդեցող զրկված լինելը: (Է. Բ.)

«В. ИЗВ.» լրագիրը գրում է. «Դեկտ. 24-ից սկսած բոլոր նաւթահանքերում և գործարան-ներում կախված էին միասնա յայտարարու-թիւններ, որոնցով գործատէրերը յայտնում են բանաւորներին և արհեստաւորներին, որ իրանք, բնակելով նրանց պահանջները, հնարաւոր գտան մտցնելու մի քանի փոփոխութիւններ և լրա-ցումներ: Այդ լրացումները վերածված են 22 կէսերի: Նրանցից ամենապիտանները հե-տեւաներն են. ամենից առաջ նրանք շօշափում են բանաւորական օրվա և հանգստի խնդրելու: Առաւօտից աշխատելու դուռն եկողների հա-մար մինչև երկույն՝ բանաւորական օրը որոշվում է 9½ աշխատանքի ժամ: Օրավարձ վարպետ-ների և միասնազգ աշխատողների համար շա-րաթական 1 օր ազատ կայ, միայն առանց վճարի այդ օրվայ համար: Ամսավճարով աշ-խատող բանաւորները (բացի օրակա 3 ձեռք փոխվողներից) ամսվայ ընթացքում 4 անգամ ազատվում են 24-ական ժամ շարունակ, ա-ռանց վճարի պակասեցման: Կիրակի և ներ-քին կանօններում յիշված տօն օրերի նախօրէ-րին 8 ժամ հանգստի են լինելու: աշխատան-քից: Այդ հանգստեան ժամանակի որոշումը կախված է ձեռնարկութեան վարչութիւնից: Գիշերային աշխատանքները կախված են ա-ռանձին խումբ բանաւորներից, որոնց աշխա-տանքն օրական 8 ժամից աւելի չէ լինելու: Յետոյ կանօնաւորված է օրվային և ամսական վարձագին չափը զանազան տեսակի բանաւոր-ների և արհեստաւորների համար: մարդկան են բնակարաններ տալու պայմանները: Բայց գրա-նով, ասում է 317-ը, բնակարանի հարցը չէ վերջանում. դեռ ևս բաց է մնում կանօնա-ւոր և կահաւորված բնակարաններ շինելու հարցը՝ մինչև որ գանձարանը յատկացնէ այդ բանին յատուկ մարուր հողամասեր: Փոփոխու-թիւնները շօշափում են և բանաւորների բնա-կարանների տաքացնելու և լուսաւորելու խըն-դիրները: Ստատացվում է շինել տալ յատուկ շէնքեր բանաւորների ճաշի ժամանակ պատա-պարվելու համար. տալ ամեն շաբաթ ձրի բա-զանիս ընդունելու իրաւունք. ոչնչացնել խու-ղարկութիւնները: Վերջապէս II դ կէտում յիշ-ված է հանքի և գործարանների վարչութիւն-ների յարաբերութիւնների կանօնաւորման մա-սին դէպի բանաւոր. այդ կէտն ասում է «բան-ւորի հետ վարչութիւնը պէտք է միշտ քաղա-քավարի լինի»: Վերջում աւելացված է, որ այս յայտարարութեան մէջ յիշված պայմանները գործառնեցին իրանց համար պարտադիր են համարում, ինքն ամուսնութեան գործը վերակեն դեկտ. 23-ի առաւօտեան ժամը 6-ից:

Սեվաստօպոլից հեռագրում են «Ք. Ը.» լրա-գրին, որ Պօրտ-Արտաբի անկան լուրը ծո-վային զօրքի վրա սաստիկ ցնդող աղիւցեա-լութիւն գործեց: Նրանք ողբում են նաւերի և ընկերների կործանումը:

Թիֆլիսի մեղանների լիազօրները ընտրու-թիւնը, որ պիտի կատարվէր այսօր, ամսիս

30-ին, իսկ նոյն լիազորները միջոցով յուն-վարի 7-ին քաղաքային վարչութեան շինու-թեան դահլիճում առաջի ընտրութիւնը, յե-տաձգվում է յունվարի 7-ից յետոյ կերակի կամ տօն օրերից մէկին:

Ամսիս 28-ին քաղաքային խորհրդի նիստում մերժվեց առաջիկայ յունվարից աւելացնել 10% այն ծառայողների ուժեղներին վրա, ու-րոնք 5 տարուց աւել են ծառայել վարչու-թեան մէջ: Ուժեղներին աւելացումը կը լինի 1910 թվից եւ այդպէս այն անձինք, որոնք տասնեակ տարիներ ծառայել են վարչութեան այժմ այնքան ուժեղացած են եղել, որ գուցէ և չարժանանան 10% աւելացման, այսօրվա-նից զրկվում են յոյսից և խաչ է դնում նը-րանց գործունէութեան վրա:

ՇԻՐԱՆԻՅ (Կարսի գաւառ) մեզ գրում են. «Սարսափելի և նոր տեսակի եղեռնագործու-թիւն, որը իր տեսակի մէջ առաջինն է: Ուս-լիֆ-օլի գիւղը, որ բաղկացած է կէսը յոյնե-րից և կէսը քրդերից, անցեալ օրը գիշերը քնած ժամանակ անյայտ չարագործները մտ-նում են մի յոյնի տուն և տաւարի նման մորթում են ամբողջ ընտանիքը, որ բաղկա-ցած է լինում վեց հոգուց: Անդամահատու-թեան ժամանակ մի հարսի փորից հանում են մի երեխայ, որ ծնվելու մօտ էր եղել: Կաս-կածը ընկնում է նոյն գիւղի քրդերի վրա, որ ինչ որ դրամական հաշիւներ են ունեցել այդ տան հետ, չարագործ քրդերից մի քանիսին ձերբակալել են: Գործը յանձնված է քննչին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Ներգաղթի ևս ուսաց մամուլի կարծիքը Պորտ-Արտուրի անկում մասին: «Рос. Вѣдомос-ти» լրագիրը մի առաջնորդող յօդուածով խօս-ելով Պորտ-Արտուրի հերոսական պաշտպա-նութեան և ուսաց պահակազօրքի ցոյց տուած անձնուէր քաջութեան մասին, նրա կրած սոս-կալի տանջանքների մասին, աւելացնում է. «Իսկ ինքը Պորտ-Արտուրը կը մնայ իբրև մի տիրալի և ուշակաւոր արձան ժողովրդական թշուառ մասնակցի կորստեան: Կառավարու-թիւնները մրցութեան պատճառով: Եւրօպա-ցիները առաջինը գնահատեցին ընտրութիւնից պաշտպանված այդ ծոցի նշանակութիւնը և ներշնչեցին միտք Զինատանին կառուցանել պայտիկ ամրութիւններ: Տասնեակ միլիոններ ծախսվեցին չինացիների կողմից ամրոցների և նաւաշինարանների կառուցման համար եւ-րօպական ինժեներների ղեկավարութեամբ: Բայց կառուցանելով ամրոցներ, չինացիները չը կարողացան կազմակերպել նրանց պաշտ-պանութիւնը և անառիկ բերել ընկաւ առա-ջին շուրթից: Սակայն եւրօպացիները չը կարողացան հաստատվել այդտեղ: Ռուսաս-տանի, Գերմանիայի և Ֆրանսիայի պնդմամբ նրանք դատարկեցին բերդը, քանդելով ամեն բան ինչ կարելի էր և դուրս տանելով բոլոր թիղանութիւնները: Դրանից յետոյ շուտով Պորտ-Արտուրը ընկաւ ուսանելի ձեռքը, ի մեծ վի-րատրումն եւրօպացիներին: Նորից և էլի աւե-լի շատ միլիոններ ծախսվեցին ամրութիւն-ներ, նաւակայաններ շինելու, շէնքեր կառու-ցանելու այդտեղ և Դալնիում, Երկաթուղի, զբաւաւորներ, կրեյտէրներ շինելու: Եւ այժմ նորից այդ ամենը կորաւ, փչացաւ, աւերվեց, դարձաւ եւրօպացիների աւաթ: Տասնեակ հա-զարաւոր Երիտասարդ կիսաքրդ, չինացիներ, եւրօպացիներ, ուսանելի զոհ բերվեցին այդ-տեղ քաղաքական մրցութիւն, անհետանալու-թեան, անձնապատանութեան:

«Königsb. Zeitung» լրագիրը գրում է. «Պատերազմական տեսակէտից, եւրօպացիներ ինչ աշտուղութիւնը հաւասար է ծովի վրա եւրօպական տիրապետութեան հաստատու-թեան պօսեւրովի ամբողջ ժամանակվայ հա-մար: Զրկվելով Պորտ-Արտուրից, Ռուսաստա-նը զրկվեց միակ չը սառնող նաւահանգստից, որի ստացման համար նա կից այնքա ծանր գոհնր: Առաջ այդ նաւահանգստի ուսաց նաւատորմը զրկված կը մնայ յենակէտից: Այժմ եւրօպական նաւատորմը կարող է հան-դարտութեամբ դուրս գալ ուսաց էսկադրայի ընդ առաջ: Այդ բերդի առումը, որը եւրօպա-ցի ինժեներները համարում էին անառիկ, վը-կայում է եւրօպացիների մեծ զինուորական սիրագործութիւնների և ձիւրքերի մասին: Դէ-լի քաղաքական նշանակութիւնը կայա-նում է այն տպաւորութեան մէջ, որ նա կը

գործէ Ասիայի վրա: Ռուսական հմայքին Հեռաւոր Ա. Եւրոպական արշաւի հարուած հասցը-վեց, որից հազիւ թէ Ռուսաստանը կարողա-նայ ուղղվել:» (Ноб.)

«НОВОСТИ» լրագիրը իր առաջնորդողում հետեւալ միտքն է յայտնում ի միջի այլոց. «Պորտ-Արտուրը մի քանի անգամ համեմատել են Սեւաստօպոլի հետ, բայց այդ համեմա-տութիւնը ճիշդ չէ: Սեւաստօպոլը կարծած չէր հաղորդակցութիւնից Ռուսաստանի հետ, մինչ Պորտ-Արտուրը կից դառն վիճակը մի քաղաքի, որի բոլոր յարաբերութիւնները ար-տաքին աշխարհի հետ ընդհատված էին: Կա-րելի է միայն գործանալ, որ նա այդքան եր-կար դիմանում է: Թշնամու ճնշող ոյժին և կարողացաւ հասցնել նրան այդքան ծանր հարուածներ: Պորտ-Արտուրի դերը, այժմ բա-լորովին վերջ ցած, ահագին ազդեցութիւն ունեցաւ պատերազմի ընթացքի վրա: Միայն Պորտ-Արտուրին ենք պարտական որ մեր զօր-քը կարողացաւ կենսորոնաւ Մուկլէնի մօտ և ուժեղանալ այնքան, որ կարողացաւ կանգ-նեցնել եւրօպական արշաւումը: Ինչ և լինի, սակայն Պորտ-Արտուրի անձնատուր լինելը կարող է Ռուսաստանի համար ծանր հետե-ւանքներ ունենալ: Մինչև որ Պորտ-Արտուրը կանգնած էր իբրև անառիկ ամրութիւն, չի-նացիները իրանց հանգիստ էին պահում: Այժմ, եւրօպացիների նոր աշտուղութեան պատ-ճառով, այդ վերաբերմունքը կարող է փոխ-վել մեզ համար աննպաստ կերպով: Ամբողջ ղեկին-մորթեան աշխարհում այդ դէպքը պէտք է համարվէ իբրև Ռուսաստանի թուլութեան նշան:» (Ноб.)

ՊԱՅՏԻՆԱԿԱՆ ԵՆՈՒՄԸ

Եւրօպական զօրքեր Պորտ-Արտուրի առումից յետոյ Բերլինից հեռագրում են «Рос.» լրագ-րին, թէ Պորտ-Արտուրը պաշարող եւրօպա-կան զօրքերից 10,000 հոգի կը մնան Պորտ-Արտուրում: Գործի միացումը մասը արդէն շարժ-վել է դէպի Ինչուի: Նա յոյս ունի միանալ Օյիամայի բանակի հետ երկու շաբաթից յետոյ: Պաշարողական ամբողջ արտիլերիան գնում է այդ զօրքերի հետ: Զինուորական շրջաննե-րում այն կարծիքն է տիրապետում, որ շու-տով պէտք է սպասել Օյիամայի բանակի ընդ-հանուր արշաւումին: Դեկտեմբերի 21-ին տե-ղական եւրօպական Լրիտասարդութիւնը, միատեղ հաւաքվելով, տօնեց հայրենիքից ե-կած ուրախալի լուրը: Մտի վրա իրար կող-բին կախված էին Նօգի և Ստեսէլ գեներալ-ների պատկերները, ծաղիկներով շրջապատ-ված: Հեռագրում են, որ եւրօպական և ուս-ական շատ զինուորներ, որոնք մնացել էին չը վերաւորված Պորտ-Արտուրի կռիւներում, կորցրել են բոլորովին լսողութիւնը թիղա-նօթագրութիւնների օրոքից:

Եւրօպական կորուստները Պորտ-Արտուրում: «Local Anz.» թերթը հետեւալ թւանշաններն է հաղորդում եւրօպացիների Պորտ-Արտուրի մօտ կրած մատաւոր կորուստների մասին: Մայիսին, Յինչօտուի մօտ—4194, յունիսին—4023, օգոստոսի սկզբին—1171, օգոստոսի 13-ին և 15-ին—1132, օգոստոսի 19-ին և 24-ին—14 833, հոկտեմբերի վերջին—13,000, դեկտեմբերի սկզբին—23,400 և դեկտեմբերի վերջին—մօտ 6000, ուրիմն ընդամենը 67,000, որոնց թուում աւելի քան 900 օֆիցէր: (Ноб.)

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

27 դեկտեմբերի

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ, 27 դեկտեմբերի: Եւրօպա-կան բանակից Պորտ-Արտուրի մօտ հաղոր-դում են, որ Պորտ-Արտուր է ուղարկված ընդհանուր շտաբի օֆիցէր կապիտան Յզու-նօղա յանձնելու Ստեսէլին միկագօի հեռա-գիրը, որի մէջ միկագօն հաւաստիացնում է, որ բերդապահ զօրքին կը վերաբերվին ամե-նամեծ ուղարկութեամբ: Կապիտան Յզունօ-ղան յանձնարարված է հաղորդել Ստեսէլին Նօգիի առաջարկութիւնը. անձնական տեսակ-ցութիւն սարքելու համար: Յզունօղան բերեց Ստեսէլին հաւեր և գինի: Ստեսէլ շնորհակա-լութեամբ ընդունեց ընծան և ապա 2 ժամ շարունակ խօսակցեց կապիտան Յզունօղաի հետ: Մտաւիցութեան ժամանակ Ստեսէլ նախ և առաջ հարցրեց, թէ ուր է գտնվում Կուր-պատկին: Յզունօղա պատասխանեց, որ նա ճիշդ տեղեկութիւններ չունի, բայց որքան յայտնի է, Կուրպատկին պէտք է գտնվի ոչ հեռու Մուկլէնից: Ստեսէլ նկատեց, որ հոկ-

տեմբերի 29-ից տեղեկութիւններ չէ ունեցել: Ստեսէլ ասեց, որ ինքն ուղարկում էր չինա-կան լրտեսներ, որոնք վերադառնալուց յետոյ հաղորդեցին, բերդն ազատելու համար ու-ղարկված զօրքը գտնվում է Յզինչօտում, 20 մղոն դէպի հիւսիս Պորտ-Արտուրից: Ստեսէլ, ըստ երեղութիւն, կասկածով չը վերաբերվեց Յզունօղայի ասածին, այն մասին, թէ Կուր-պատկին պարտութիւն է կրել և յետ է մղված դէպի Մուկլէն: Յզունօղա ցոյց տուեց Ստես-էլին երկու բանակների դրութեան քարտէսը. Շախէի մօտ: Ստեսէլ զարմանք յայտնեց, և ապա հարցրեց, թէ հուր է բալտիական նաւա-տորմը: Իմանալով, որ էսկադրայի մի քանի նաւեր դեռ ևս Բաբելոնայ հրուանդանի շուրջը չեն անցել, Ստեսէլ դիւրութեամբ ասեց. «Այժմ, Պորտ-Արտուրի անկումից յետոյ, էս-կադրայի ուղարկումը նպատակ չունի» և վերջում նկատեց, որ իր բաւաւնքն է համարում վերադառնալ Ռուսաստան: Հասակը պահանջէ յայտնում վայելելու ընտանեկան կեանքը: Նա իր հետ է վերցնում հինգ որսերի, որոնք մնա-ցել են պաշարման ժամանակ սպանված օֆի-ցերներէից:

ԶԻՖՈՒ, 27 դեկտեմբերի: (Բէյտէր): Երեկ, երբ եւրօպացիները տօնում էին Պորտ-Ար-տուրի անձնատուր լինելը, թատրոնական ներ-կայացման ժամանակ, եւրօպական հիւպատո-սից ստացվեց մի յուզիչ տեղեկութիւն, որը անբաղկաւ ընդհանուր շնորհակա-լուր է պատմում, որ հիւպատոսը իբր թէ երկուց էր կրում չի-նացիների հետ ընդհարմիւրեց: Ուրիշ տեղե-կութիւնների համեմատ, տեղեկութիւններ են ստացված ականի պայթումի մասին Պորտ-Արտուրում, որ լուրը հետեւանքներ է ունեցել: ՇՆԱԿՆԱՅ, (Բէյտէր): Զինաւոր է սանձանել իրական-հսկողութիւն Զինատանում բնակեցրած ուս-նների վրա:

ԼՈՆԴՈՆ: Բէյտէրի թղթակիցը Նօգիի բա-նակում հեռագրում է դեկտեմբերի 24-ից. «Այսօր Պորտ-Արտուրի ուսական բերդապահ զօրքի 5000 մարդ ուղարկվեցին Նակուզդէ գիւղը Ալաւնու ծովախորշի և Շանիտուղի մօտ: 1000 մարդուց բաղկացած առաջին էշէ-լուն ժամանեց այնտեղ ժամը 3-ին, ուրիշները եկան յետոյ: Իւրաքանչիւր էշէլուն ունի 6 բեռնատրված ֆուրգօններ: Զօրքին ապա բաց վազօններ ունեցող յատուկ գնացքներով կիսաղբիջ նաւերը Եւրօպիա տեղափոխելու համար: Շանիտուղու առաջին եկողներն էին շտաբի օֆիցէրներ 4 ջնկաներով և բոլորը հրաժարվեցին խօսք տալուց: Նրանք սրբով էին: Ապա անցան օֆիցէրները, իւրաքանչիւրը իր զօրամասի հետ: Դէպքերի վրա նկատելի էին յոգնածութեան և յուզմունքների հետքեր: Նրանք չարութեամբ են նայում եւրօպացիներ ի վրա, որոնք եկել հաւաքվել են հաւաքը-րութիւնից: Օֆիցէրները լաւ են հագնված, զինուորները կիսատու կիսամուշտաններով են: Եւրօպացիները շատ յարգանք և բարեացա-կամութիւն ցոյց տուին զինուորական գերի-ններին, առաջարկելով պապրուսներ և զարե-շուր և օգնելով իրեն տանելու ժամանակ: Երկաթուղիները կզիջեցնեն զժի յայտնվելու փոխված է համարեալ մինչև Պորտ-Արտուր, երկաթու-ղիական հաղորդակցութիւնները կը վերսկսվեն մի քանի օրից յետոյ: Եւրօպական ինժեներ-ները հետազոտում են արևելեան մարտից-ների վնասութիւնները:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒՍ (Բէյտէր): Ծովապետ Դօբ-րօտովսկուի էսկադրան սպասվում է Պորտ-Սա-խովում առաւօտեան 4 ժամին: Զրանցքով նրա անցնելու կարգադրութիւնները դեռ ևս հա-ղորդված չեն: Եւրօպական կառավարութիւնը բողոք յայտնեց Ռուսական նաւերին պաշարներ հայթայթելու դէմ: Զրանցքով անցնելու ժա-մանակ էսկադրան կը պաշտպանվի պատրու-ններով:

ՏՕԿԻՈ: (Բէյտէր): Ծովային մինիստրութիւ-նը ցաւակցութիւն է յայտնում այն թիւրիմա-ցութեան առիթով, որ ծագել է անգլիական «Անդրոմէդ» կրէյսէրը պաշարներով Պորտ-Ար-տուր ուղարկելուց և յայտնում է, որ եւրօպա-կան կոմիտէները, հրաժարվելով օգնութիւ-նից, վարվել է ընդհանուր կանոնների համա-ձայն: Եւրօպական իշխանութիւնները, հենց որ Վէյսայվից գեկուցում ստացվեց «Անդրոմէ-տայի» ուղարկելու մասին, իմաց տուին, որ օգնութիւնը շնորհակալութեամբ կընդունվի, սակայն Պորտ-Արտուրում ստացված այդ հրա-մանը այլ ևս չը գտաւ այնտեղ «Անտրոմէ-տային»:

ՊԱՐԻՉ, 28 դեկտեմբերի: «Էքս-դը-Պարի»

լրագրի մէջ հրատարակված է Ֆորմօզայի նա-հանգապետ Կօլամայի խորհրդապահ ղեկու-ցումը, 1902 թվից: Նրա մէջ ցոյց է տրվում Ռուսաստանի հետ կռիւ մղելու անհրաժեշ-տութիւնը, նախքան ձեռնարկելը Հնդկա-Զի-նաստանի նուաճման. այդպիսով բացատրվում է, որ Եւրօպիան պատրաստվում է հակադա-կան կռիւ ամբողջ Արեւմուտքի դէմ:

ՏՕԿԻՈ, 28 դեկտեմբերի: (Բէյտէրի գործ.): Նօգին հաղորդում է ի լրումն պատերազմա-կան գերիներին ցուցակի հետեւալ անունները. գեներալներ Նիկիտին և Բէյլ և ծովապետ Վիլհելմ: Բացի գեներալ լէյտենանտ Ստեսէ-լից, խօսք են տուել չը կռիւլու Եւրօպիայի դէմ գեներալներ Բէյա, Նա ին և Կօստենկօլ, ծովապետներ իշխան Ուիտօսկի, Գրիգօրօ-վիչ և Ռօշտիլեցիի և գլխաւոր ինժեներ Րին-բեքալ:

ՆԱԳԱՍԱԿԻ, 28 դեկտեմբերի: (Բէյտէր): Եկաւ «Տօղաւարու» կրէյսէրը 28 ուս օֆի-ցէրներով և հազար ուս զինուորներով: Օֆի-ցէրները ափ իջան Նագասակի, իսկ զինուոր-ները ուղարկվեցին Կօկուրա:

ՏՕԿԻՈ: Ծովային մինիստրութիւնը հաղոր-դում է, որ մինչև այժմ պայթեցրված է 395 ական: Ռուսաց հիւանդանոցներում գտնվել են դեռ կենդանի մնացած 10 եւրօպացիներ, որոնք մասնակցել էին այն արշաւանքին, որ նշանակում էր փակել բրանդենբուրգ նա-ւահանգստի մուտքը:

ՊՐՏ. ՍԱՅԻՆ, 28 դեկտեմբերի, ժամը 1 և 50 ր. կէս օրվայ (Բէյտէր): Դօբրօտովսկուի էսկադրան տեսնվում է հօրեզմի վրա:

ՄԱՐՍԻՅԸ, 27 դեկտեմբերի: Վախճանվեց անիշխանականութիւն Լուիզա Միշլէ:

Կ. ՊՈԼԻՍ, 29 դեկտեմբերի: Բ. Դուռը ու-ղարկեց իր գեղապետութիւններին յիշատակա-գիր, որի մէջ յայտնում է, թէ քաղաքական լրագրիները հաւաստեացումները իբր թէ Դուռը հրաժարվում է կատարել թիւրք ըլ-գարական համաձայնութեան որոշումները, հիմք չունեն:

ՊԱՐԻՉ: Հուլի միջնադէպի ընկի յանձնա-ժողովի այսօրվայ նիստում, որ տեղե ժա-ր 10-ից մինչև 12-ը, շարունակվեց յանձնա-ժողովի աշխատութիւնների կարգի մշակումը: Հետեւալ նիստը կը կայանայ կամը 2-ին:

ՍԱՆՏՐԱՆՏԻՆՍԿԻ, 23 դեկտեմբերի: Այսօր Եւրօպիան է ուղարկվում «Ջօրա» շոգենաւով 2 1/2 միլիոն դոլարով:

29 դեկտեմբերի

ՊՐՏ-ԱՐՏՈՒՐ, 28 դեկտեմբերի: Դեներալ-ներ Ստեսէլ և Բէյա ուղարկում են Ռուսաս-տան—Հաստատվում է, որ պատերազմական նաւերը նաւահանգստում այսքան վնասված են, որ անկարելի է նրանց շուտով բարձրաց-նել: «Իէլի-Տիւրքաթ» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ տեսել է հազարաւոր գերի-ներ: Զինուորների վրա նկատելի չեն յոգնա-ծութեան, զրկանքների և հիւանդութիւնների հետքեր: Զինուորները դէմքերը ծածկված են սպիւններով: Բոլոր օֆիցէրները, թուով 300 մարդ, բացի բերդապահ զօրքին չը պատկա-նողներէից, վազեցին գերի տարված զինուոր-ների վրձնված բաժանիկ Եւրօպիայում:

ՍԱՆԴԱՅԱՆ: Եւրօպական երկու փոխադրիչ նաւեր երեւցին Լաւուանի մօտ: Ինկուսները 25-ին Լաւուան եկան երկու շոգենաւ քաթա-ծուխով ուսական նաւերի համար:

ՏՕԿԻՈ: Քաղաքային վարչութիւնը Նագա-սակիում յատկացրեց 6500 ին ուս գերի-ններին հիւրապրելու համար:

ԼՈՆԴՈՆ: Պորտ-Արտուրի ժարտիկներէից մէկում դեկտեմբերի 26-ին տեղի ունեցաւ ֆուգասի պայթում: Սպանված են եւրօպա-կան 20 զինուոր և երկու ձի: Քաղաքում նոյն-պէս պայթեցին երկու ֆուգասներ:

ՊՐՏ-ՍԱՅԻՆ: Եկան «Ուլէզ», «Իլուվուրու», «Բիոն» և «Ինէպը» կրէյսէրները: «Գրօվի», «Գրօվի» և «Բէյլի» տականաւերը և անգ-լիական «Էմբարզ» զբոսաւաւը: Բոլոր նաւե-րի վրա դրված են անթիլ հեռագրի գործիք-ները: Եւրօպական իշխանութիւնները պա-հանջած, ուսական նաւերի հրամանատար-ներին կը թողաւորել ընդունել սանձաւաժակ քանակութեամբ ածուխ, քաղցր շուր և ուսուս-տի պաշարներ:

ՊՐՏ-ՍԱՅԻՆ: Էսկադրան մեկնեց առաւօ-տեան ժամը 10-ին:

ՊՐՏ-ՍԱՅԻՆ, 28 դեկտեմբերի: Հաղորդում են, որ եւրօպական էսկադրան հասաւ Դիէգո-Դարսիա նաւահանգիստը և ուղարկեց խու-զարկուներ արևմտեան ուղղութեամբ: Ծովա-պետ Րօստովսկուի թիկնապահը յայտնեց Տամատավում, որ բալտիական էսկադրայի լու-

